Հաստատում եմ՝

ՄԿԱ գծով փոխտնօրեն Գ. Մելիքբեկյան

Արագածոտնի մարզ Արագածավանի
թիվ 1 միջնակարգ դպրոց

ԱԽ-ի 2022-2023 ուս. տարվա
աշխատանքային ծրագիր

2022թ.

Աշակերտական Խորհրդի նպատակները

1. Միավորել դպրոցի աշակերտներին, ներգրավել նրանց դպրոցում կայանալիք միջոցառումներին և հասարակական աշխատանքներին:

2. Հանդիսանալ կապող օղակ դպրոցի աշակերտության և տնօրենության միջև:

3. Տնօրենությանը ներկայացնել դպրոցի աշակերտների խնդիրներն ու առաջարկները:

4. Պահպանել դպրոցի ավանդույթները:

ԱԽ-ի կազմավորումը

- Դասարանական խորհրդի ընտրություններ
- Աշակերտական խորհրդի կազմավորում
- ԱԽ նախագահի թեկնածուների առաջադրում
- Նախընտրական քարոզարշավ
- Ընտրական հանձնաժողովի ձևավորում
- Ընտրացուցակների կազմում
- ԱԽ նախագահի ընտրություններ
- Արձանագրության կազմում
- Նախարարությունների ձևավորում
- ԱԽ կազմի ներկայացում դպրոցին

ԱԽ-ի նախագահը

- Ղեկավարում է խորհրդի գործունեությունը նիստերի միջև ընկած ժամանակահատվածում
- Հանդիսանում է սովորողների ներկայացուցիչը դպրոցում
- Մասնակցում է դպրոցի մանկավարժական, ծնողական խորհուրդների, դպրոցի խորհրդի, տնօրինության աշխատանքներին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով
- Տարեկան հաշվետվություն է ներկայացնում ԱԽ-ի գործունեության մասին սովորողների ընդհանուր ժողովին

ԱԽ-ի գործունեության սկզբունքները

- Կամավորություն
- Սովորողների իրավահավասարություն
- Հորիզոնական կառավարում
- Թափանցիկություն

ԱԽ-ը համագործակցում է



Աշակերտական խորհրդի խնդիրները

1. Կազմակերպել աշակերտների արտադասարանական հասարակական աշխատանքներ՝ հաշվի առնելով նրանց հետաքրքրություններն ու արդի խնդիրները:

2. Ցուցաբերել ակտիվ մասնակցություն դպրոցի տնտեսական ու մանկավարժական խնդիրների լուծման գործում:

3. Ներկայացնել թիվ 1 դպրոցի ԱԽ անդամներին , կապեր հաստատել ուրիշ դպրոցների հասարակական կազմակերպությունների հետ:

4.Հետևել դպրոցի աշակերտների կարգ ու կանոնի պահպանմանը:

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ՍՊՈՐՏԻ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ՌԱԶՄԱՀԱՅԱՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Կրթություն



Նպաստում է աշակերտների առաջադիմության բարձրացմանը:

ԱԽ-ի գործունեության ժամկետները

ԱԽ կազմը ձևավորվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին՝ մինչև սեպտեմբերի վերջ, և գործունեությունը շարունակում է մինչ հաջորդ ուսումնական տարի՝ նոր ԱԽ-ի կազմավորումը:



Իրավունք

Հետևում է սովորողների իրավունքների և պարտականությունների իրացմանը, նպաստում է նրանց իրավական դաստիարակությանը:

Սպորտ և առողջապահություն

Նպաստում է դպրոցում առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորմանը:



ԱԽ-ի նախարարությունները



Տեղեկատվություն

Լուսաբանում է դպրոցում և համայնքում կատարվող իրադարձությունները, ապահովում է կապն այլ համայնքների հետ:

Մշակույթ



Ակտիվացնում է դպրոցի և համայնքի մշակութային կյանքը:

Բնապահպանություն



*Հետևում է միջավայրի մաքրությանը, նպաստում սովորողների բնապահպանական կրթությանը:


ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԳԵՏ
COAF
ԱԽ ծրագրի հաստատում, կազմակերպչական հարցերում ուղղորդում
Կայացած ԱԽ
ԱԽ թիմի հմտությունների զարգացում

ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

1. Կազմակերպել դպրոցի աշակերտական խորհրդի և նրա անդամների ընտրությունը, ինչպես նաև հանձնախմբերի և նրանց ղեկավարների ընտրությունը:

2. Օգնել աշակերտական խորհրդին պլանավորելու նոր ուսումնական տարվա աշխատանքները, կազմել համալիր ծրագիր և դնել խորհրդի անդամների քննարկմանը:

3. Աշակերտական խորհրդում ունենալ հետևյալ հանձնախմբերը.

ա) ՈՒսումնական

բ) Կարգապահական

գ) Սպորտային

դ) Կուլտ-մասսայական(միջոցառումներ-խմբկոլ)

ե) Սանիտարական

4. Կազմակերպել աշակերտական խորհրդի աշխատանքները,

ապահովելով նրա գործունեությունը դպրոցի ներքին աշխատանքին

ա) Միասնական կոլեկտիվի ստեղծում:

բ) Մասնակցություն կրթության և դաստիարակության գործին:

գ) Աշակերտական հերթապահություն:

5. Աշակերտական խորհրդի նիստում լսել դասարանների առաջադիմության հարցեր:

6 Կազմակերպել միջդասարանային մրցույթներ՝

ա) Լավագույ դասասաենյակ

բ) Լավագույն շարադրությունՆ

գ) Լավագույն ձեռագիր և նկար

8. Հետևել, որպեսզի աշակերտների ուժերով լույս տեսնեն պատի թերթեր, կազմվեն վահանակներ.

9. ՈՒշադրության կենտրոնում պահել ստեղծագործող և շնորհալի աշակերտներին, բացահայտել նրանց և խրախուսել լավագույններին:

10.Աշակերտական ուսումնական հանձնախմբում լսել ետ մնացող աշակերտների հարցերը, կազմակերպել ընկերական փոխօգնություն:

11. Կազմակերպել շնորհալի աշակերտների ձեռքի աշխատանքները ներկայացնող ցուցահանդեսներ, լավագույնները ներկայացնել մարզային և հանրապետական մրցումներին:

12. Պատշաճ մակարդակով կազմակերպել աշակերտների հանգիստը և ժամանցը:

Հ/հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարող անձ	Կատարման ժամկետը	Նշումներ
1.	Աշակերտական խորհրդի տարեկան աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:	✓		
2.	Ի գիտություն ընդունել և հավանություն տալ դպրոցում ացկացվող արտադպրոցական և արտադասարանական միջոցառումներն:			
3.	**Ուսման առաջադիմության բարձրացում.** **ա.**Բացահայտել չառաջադիմող աշակերտներին և պարզել հետ մնալու պատճառները: **բ.**Ներդնել միջոցներ հետ մնացող աշակերտների ուսման մակարդակը բարձրացնելու համար: **գ.**Կազմակերպել կիսամյակային ամփոփումներ ուսումնադաստիարակչական աշխատանքների վերաբերյալ: **դ.** Մշակել և ներդնել առաջադիմող աշակերտների խրախուսման մեխանիզմներ:			
4.	**Նպաստել աշակերտների գիտելիքների հարստացմանն ու ամրապնդմանը.** **ա.**Կազմակերպել վիկտորինաներ և առարկայական մրցույթներ:			
5.	Կազմակերպել և անցկացնել շնորհանդեսներ:			
6.	Սահմանել կարգ ՝ 1.Յուրաքանչյուր սովորող դպրոցում լինի դասերը սկսվելուց 15 րոպե առաջ՝ ըստ <<Աշխատանքային ժամանակացույցի>> հիմք ընդունելով՝ <<Ներքին կարգապահական կանոնները>>:			
7.	Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների,անհարգելի			

	բացակայությունների նկատմամբ,ժամանակին կանխել դրանք,անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքի սահմանված կարգով:			
8.	Աշխատանք տանել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ:			
9.	Աջակցել կազմակերպել սովորողների հանգիստն ու ժամանցը :			
10.	**Աջակցություն սոցիալապես անապահով երեխաներին:** **ա .**Սոցիալապես անապահով երեխաների հաշվառում: **բ.**Մշակել և ներդնել միջոցներ՝ սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար:			
11.	Սահմանել մշտական դիտարկումներ ուսումնական տարածքների /մարզադահլիճ,դասասենյակ/ սահմանված ջերմաստիճանի պահպանման համար:			
12.	5-9-րդ դասարաններում կազմակերպել և անցկացնել բանավեճեր,քննարկումներ, կլոր սեղաններ և այլն,որոնք ավելի կնպաստեն աշակերտների ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացմանը:			
13.	Կազմակերպել ամենամսյա մրցույթ ,,Լավագույտ աշակերտ/ ուհի,, պարբերաբար ամփոփել և ներկայացնել խրախուսման:			
14.	Անցանկալի վարքի պատճառների ուսումնասիրություն և համապատասխան աշխատանքի պլանավորում:			
15.	Դժվար առաջադիմող			

	աշակերտներին ,ըստ նրանց ընդունակությունների և հետաքրքրությունների, ընդգրկել դպրոցական խմբակներին, միջոցառումներին:			
16.	Ուշադրության կենտրոնում պահել դժվար դաստիարակվող երեխաներին և համապատասխան աշխատանք տանել նրանց հետ:			
17.	Ուշադրության կենտրոնում պահել դպրոց ընդունված նոր աշակերտներին:			
18.	Յուրաքանչյուր ամսվա վերջում աշակերտական խորհրդի նիստում քննարկել սովորողների հուզող հարցերը:			
19.	Խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել մանկավարժական խորհրդի նիստին ,որտեղ քննարկվելու են աշակերտների առաջադիմությանը և կարգապահությանը վերաբերող հարցեր:			
20.	Պարբերաբար կազմակերպել բանավեճեր , քննարկումներ, կլոր սեղաններ, որոնք էլ ավելի կնպաստեն աշակերտների ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացմանը:			
21.	Դպրոցում ստեղծել <<Մարդու իրավունքների >> և <<Երեխաների իրավունքների>> հոչակագրերը լուսաբանող վահանակ:			
22.	Աշակերտներին ծանոթացնել ՄԱԿ-Ի միջազգային կառույցի գործունեության և նրանց կողմից սահմանված և ընդունված մարդու իրավունքների հոչակագրին:			
23.	Աջակցել դասարաններում կազմակերպել քնարկումներ <<Մարդու իրավունքները>>թեմայով՝ նվիրված հոչակագրին			
24.	Աշնանային և գարնանային ծառատունկի օրերին կազմակերպել ծառատունկ :			
25.	Աջակցել աշնանային			

	արձակուրդներին կազմակերպվող ճանաչողական էքսկուրսիաներին:			
26.	Դպրոցում կազմակերպել աշակերտական ինքնավարության օրեր:			
27.	Աշակերտներին ծանոթացնել ազգային ոգու պահպանման, հայեցի դաստիարակության կարևոր ուղղություններին՝ ռազմահայրենասիրական ազգային գաղափարախոսության տեսակետներին:			
28.	Պատրաստել ՀՀ հերոսների մասին պատմող և անկախության 27 ամյակը լուսաբանող վահանակ;			
29.	Ուսուցչի տոնին նվիրված 1. Պատի թերթի լույս ընծայում՝ <Տոնդ շնորհավոր սիրելի ուսուցիչ> խորագրով			
30.	Աջակցել դպրոցում կազմակերպվող միջդպրոցական սպորտային մրցումներին:			
31.	Էրեբունի –Երևան 2800 Միջոցառում –ցերեկույթի կազմակերպում;			
32.	Աջակցել Միքայել Նալբանդյանի 189 ամյակին նվիրված ցերեկույթի կազմակերպման և 1-ին դասարանների երդման արարողություն աշխատանքներին;			
33.	Շնորհալի աշակերտների ուժերով կազմակերպել ցուցահանդեսներ :			
34.	ԶԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվան նիրված ռեֆերատ- աշխատանքներ			
35.	Աջակցել հասարակական կազմակերպությունների կողմից դպրոցում անցկացվող միջոցառումների,դասընթացների և այլ աշխատանքների իրականացմանը:			
36.	Աջակցել ստեղծել վահանակ <<Ուր գնալ սովորելու>>՝ աշակերտների			

	մասնագիտական կողմնորոշումը ճիշտ նպատակառղղելու համար:			
37.	<<Երեխայի իրավունքների>> հռչակագրի քննարկում և լուսաբանում			
38.	Մանկական տեսչության աշխատակիցների հետ համատեղ մշակել միջոցառումների ծրագիր: Մեծ ուշադրություն դարձնել դասերից հետո աշակերտների զբաղվածությանը:			
39.	Կլոր սեղան ուղղված ՁԻԱՀ-ով հիվանդների հանդեպ հոգատարությանն ու անխտրական վերաբերմունքին,դասղեկի ժամ :			
40.	Երկրաշարժի զոհերի հիշատակի օր			
41.	<<Մարդու իրավունքների>> հռչակագրի քննարկում և լուսաբանում:			
42.	Աջակցել Ամանորի շեմին կազմակերպել ամանորյա հանդեսներ			
43.	Նախազինակոչիկային տարիքի տղաների հետ անցկացնել զրույցներ <<ՀՀ ապագա զինվորներ թեմայով>>:			
44.	Հայոց բանակի հերոսներին նվիրված թեմատիկ զրույցներ, ռեֆերատ աշխատանքներ,միրոցառում ցերեկույթ:			
45.	Այցելություն Հայրենական մեծ պատերազմում,Արցախի անկախության,Հայաստանի սահմանների պաշպանության համար զոհված մարտիկների հուշակոթողներին:			
46.	Դպրոցում կազմակերպել <<Առողջության օր>>,կազմակերպել զրույց-զեկուցումներ առողջ ապրելակերպի շուրջ:			
47.	Աշակերտների գեղագիտական դաստիարակության ձևավորման			

	նպատակով աջակցել կազմակերպել միջոցառումներ,թաթերական ներկայացումներ,էքսկուրսիաներ, այցել ություն թանգարաններ և այլ մշակույթային օջախներ:			
48.	Կազմակերպել կլոր սեղան,թեմատիկ զրույցներ մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում խորագրով			
49	Ծխախոտի իրացման,սպառման և օգտագործման սահմանափակումների մասին օրենքի իրազեկում աշակերտների ուսուցիչների և ծնողների շրջանում:			
50	Կլոր սեղան, զրույց –զեկուցումներ ուղղված ակոհոլի,ծխախոտի, թմրամիջոցների, և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը կանխարգելելու և դրանց վնասների մասին:			
51.	Ազգային ավանդույթներ և տոներ շրջանակում կազմակերպել զրույցներ,ռեֆերատ աշխատանքներ,հանդեսներ:			
52.	Մայրենիի օրվան նվիրված միջոցառման կազմակերպում			
53.	Գիրք նվիրելու օր			
54.	Ըստ Հայ առաքելական եկեղեցու տոնացույցի / Սուրբ Զատիկ,Տիարնընդառաջ,Սուրբ Զատիկ /դպրոցում կազմակերպել միջոցառումներ /ռեֆերատներ,պատի թերթեր/:			
55.	Կլոր սեղան՝ <<Երկրագունդը բոլորիս տունն է>>:			
56.	Աշխատանքային հմտությունների կառուցողական վերաբերմունքի խթանում,մասնագիտական կողմնորոշում			
57.	Աշխատանքին ,արհեստներին նվիրված զրույցների,զեկույցների կազմակերպում:			

58.	Դպրոցի շենքի գույքի պահպանման նորոգման աշխատանքները աշակերտների համար դարձնել աշխատանքային դաստրարակության լավագույն միջոց:			
59.	Ստեղծել աշակերտական աշխատանքային խմբեր նստարանները, սեղանները ու աթոռները վերանորոգելու, տեղափոխելու նկարզավորելու համար:			